Հայոց եկեղեցու պատմություն

Թեմատիկ թեստային աշխատանք

V դասարան (I կիսամյակ)

Ա/Ա _____

1. Քանի՞ հիմնական մասից է բաղկացած Աստվածաշունչը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

ա) 27 բ) 48 գ) 1 դ) 2

2. Նշի՛ր, թե ինչպես են կոչվում Նոր Կտակարանի առաջին 4 գրքերը:

ա) Հայտնություն բ) Ավետարաններ գ) Մարգարեություններ դ) Մատյան

3. Ընտրի՛ր, թե ինչի մասին են պատմում Ավետարաններին հաջորդող գրքերը:

ա) Հիսուս Քրիստոսի ծննդի, կյանքի ու գործերի, պատվիրանների մասին

բ) Հիսուս Քրիստոսի կատարած հրաշքների ու բժշկությունների մասին

գ) Առաքյալների գործերի, քարոզչության մասին

4. Ընտրի՛ր ճիշտ պատասխանը. նշվածներից ո՞վ Նոյի որդին չէ:

ա) Սեմ բ) Քանան գ) Հաբեթ

5. Նշի՛ր, թե ինչ հաստատեց Աստված Իր և Նոյի ու նրա որդիների միջև:

ա) Թշնամություն բ) Մտերմություն գ) Ուխտ

6. Գրի՛ առ, թե հայ որ նշանավոր գրող և մանկավարժն է բարձրացել Արարատ լեռ:

_____

7. Նշի՛ր ճիշտ պնդումը:

ա) Աստված ստեղծեց Եվային՝ որպես Ադամի առաջնորդ և խորհրդատու:

բ) Աստված ստեղծեց Եվային՝ որպես Ադամի ընկեր և օգնական:

գ) Աստված ստեղծեց Եվային՝ որպես Ադամի ենթակա և ծառա:

8. Գրի՛ր այն բառը, որի բացատրությունը բերված է ստորև:

Պայման, դաշինք, համաձայնություն, որ հաստատվել է Աստծո և Նոյի ընտանիքի միջև - _____

9. Ո՞ր մարգարեն է Աստվածաշնչում խոսում Հայաստանի մասին: Գրի՛ր ճիշտ պատասխանը:

_____

10. Ո՞ր դասից է բերված հատվածը: Գրի՛ր վերնագիրը և լրացրու՛ բաց թողած բառը:

Հետագայում մարդիկ դարձան հպարտ ու մեծամիտ: Նրանք այնքան էին զոռոզացել, որ ուզում էին բարձրանալ և հասնել Աստծուն: Այդ նպատակով _____ քաղաքում սկսեցին աշտարակ կառուցել:

_____

11. Ի՞նչ է նշանակում Մովսես անունը՝ _____

12. Նշի՛ր, թե Հակոբի որդիներից հրեական քանի ցեղ առաջացավ - _____

13. Վերհիշի՛ր և նշի՛ր, թե ե՞րբ է առաջին անգամ տպագրվել հայերեն Աստվածաշունչը:

ա) 1632-1634թթ. բ) 1666-1668թթ. գ) 1555-1558թթ.

1	

14. Համապատասխանեցրու՛

1. Արարչագործություն	ա) նավ
2. Կենաց ծառ	բ) կատարած վատ արարքների համար ափսոսալ
3. Քառս	գ) պետության խորհրդանիշ
4. Դրախտ	դ) խաղողի տունկ, վազ
5. Տապան	ե) գոյություն ունեցող ամեն ինչի արարումը Աստծո կողմից
6. Զղջալ	զ) կյանքի ծառ, որի պտուղներն անմահություն են պարգևում
7. Ուխտ	է) այնտեղ երևաց
8. Երև անդ	ը) համաձայնություն, պայման
9. Խաղողի որթ	թ) աստվածային պարտեզ
10. Զինանշան	ժ) անկանոն վիճակ

2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	
10	

15. Համապատասխանեցրու՛ բառերը և բացատրությունները:

1. Ջրհեղեղ	ա)Աղետ, որով Աստված պատժեց մարդկությանը:
2. Նոյ	բ) Միջոց, որով աղետից փրկվեցին մարդիկ և կենդանիները:
3. Տապան	գ) Վայր, ուր աղետից հետո կանգ առավ փրկության նավը:
4. Արարատ	դ) Անձ, ում վստահվեց կյանքի շարունակականության ապահովումը:

1	
2	
3	
4	

16. Իրադարձությունները դասավորի՛ր ըստ հաջորդականության:

1. Աստված Աբրահամին պատվիրեց, որ իր զերդաստանով գնա Միջերկրական ծովի ափին գտնվող Քանան երկիրը:
2. Իսահակի որդիներից Հակոբը, ով հետագայում կոչվեց Իսրայել, ունեցավ 12 որդի, որոնցից էլ առաջացան հրեական 12 ցեղերը:
3. Աբրահամին ու Սառային Աստված պարգևեց մի որդի՝ Իսահակին:
4. Աբրահամն իր կնոջ՝ Սառայի և եղբայրների հետ ապրում էր Միջագետքում:

_____

17. Համապատասխանեցրու՛ բառերը և բացատրությունները.

1. Ավետարան
2. Թարգմանությունների թագուհի
3. Նոր Կտակարան

ա) Հիսուս Քրիստոսի ծնունդից հետո գրված գիրք, Նոր Ուխտ

բ) Հիսուս Քրիստոսի կյանքը, գործերն ու պատվիրանները ներկայացնող գիրք

գ) Աստվածաշնչի հայերեն թարգմանության որոշ հատվածների բնութագիր

1	
2	
3	

____/_____/____

_____ միավոր